

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՍ



ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍՏԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱՐԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

14 հունիսի

Գերմանիայի դեսպանին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Շարյազույն Պատրիարքը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Գերմանիայի Հանրապետության արտակարգ լիազոր դեսպան տիկին Հայեթ Փայլին:

ճանաչելու եւ այժմ, երբ հրաժեշտի պահին է մոտեցել, մեր սրտի ամենաշերտ գնահատանքն ու շնորհակալությունն ենք ձեզ փոխանցում՝ ձեր մատուցած ծառայությունների համար, որ օգտակար եղան մեր Հայրենիքին եւ ժողովրդին»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ հաջորդությունը ցականալով դեսպանին հետագա ծառայության մեջ:

«Ուրախ ենք, որ առիթն ունեցանք ձեզ

15 հունիսի

ԵԵԿ-ի «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի անդամներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպայի Եկեղեցիների կոնֆերանսի (ԵԵԿ) «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի անդամներին:

Հանդիպման ընթացքում Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Եզնիկ արք. Պետրոսյանը շեշտեց հատկապես ԵԵԿ-ի «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի կարելուր առաքելությունը՝ անդամ Եկեղեցիներում ծառայած մարտահրավերների հարցադրման գործում: Այս ներկայությունն իր օրինությունը եւ բարեմարտանքը տվեց Վեհափառ Հայրապետը. «Ուրախ ենք, որ Հայոց Եկեղեցին անդամ է Եվրոպայի Եկեղեցիների կոնֆերանսի եւ իր գործուն մասնակցությունն է բերում Եկեղեցիների միջե փոխհասկացողության եւ երկխոսության հաստատման գործին»:

Վեհափառ Հայրապետն այս այցը կկատարվի մեկ հնարավորություն եւս՝ մոտիկից ճանաչելու Հայոց Եկեղեցին եւ նրա ներկայիս կացությունը եւ անդրադարձավ մեր ժողովրդի կյանքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությանը: Իր խոսքի ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը հաջորդություն մաղթեց ժողովի աշխատանքներին:

Գուցաբերվող հոգատարության համար Վեհափառ Հայրապետին ներկայանեցին շնորհակալություն հայտնեց «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի համանախագահ տիկին Անթի Բաթրեյանը:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում բնակվող աուսական, ասորական, հրեական, եգիպտական, քրդական, ուկրաինական, բելառուսական, լեհական, վրացական եւ հունական համայնքների ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ կրթության, գիտության, ազգային փոքրամասնությունների եւ կրթության գծով ՀՀ Սահմանադրությունից ելնող Երիցյանը՝ շնորհադրեցով տիրա Սերգո Երիցյանը՝ շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին՝ ընդունելության համար:

պետին՝ ընդունելության եւ ցուցաբերած ուշադրության համար: Այս իր պատգամը ներկայանեցին ուղեղ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Ուրախալի է, որ դուք ունեց բոլոր դիվանագիտական կապերով ձեր հայրենիքին եւ հայրենիքին»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ շնորհակալություն հայտնելով նրանց հայրենիքին եւ հայրենիքին: «Դուք կըլնեք եւ երջարության եւ երկրի... Դուք կըլնեք եւ երջարության եւ երկրի...»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ շնորհակալություն հայտնելով նրանց հայրենիքին եւ հայրենիքին:

26 հունիսի

ՄԱՆ Արեւելյան թեմի թեմական խորհրդի եւ ՀՅԴ-ի հոգաբարձուների խորհրդի անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՄԱՆ հայոց Արեւելյան թեմի թեմական խորհրդի անդամներին, Հայ օգնության ֆոնդի հոգաբարձուների խորհրդի անդամներին՝ ՄԱՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ հաժակ արք. Պարսամյանին, թեմական խորհրդի ատանալետ տիրա Օսկար Թաթևյանին եւ ՀՅԴ գործադիր տնօրեն Գառնիկ Նանագույանին առաջնորդությամբ:

«Եկեղ ենք Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, մեր ուխտը վերանորոգելու հանդեպ մեր Եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ հայտնելու Հայրենիքին մեր գորակցությունը»,- ներկայների անունից ասաց հաժակ արքեպիսկոպոստը՝ տեղեկացնելով ՀՅԴ-ի տր շեքի բացման (հունիսի 28-ի) մասին:

Այս ողջույնի եւ օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը: «Հայ օգնության ֆոնդի մասին խոսելով՝ անմիջապես մեր հիշողության մեջ վերադառնալով:

28 հունիսի

Հունաստանի Նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանի Հանրապետության Նախագահի Կարոլոս Դապուլիսիսին եւ տիկին Մեղ Դապուլիսիսին՝ ուղեկցությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Հովիկ Աբրահամյանին:

Ուրախություն հայտնելով Հունաստանի Նախագահին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այցի առիթով՝ Նորին Սրբությունը ներկայացրեց Հայոց Եկեղեցու հոգեւոր կենտրոնի կարելուր առաքելությունը ժողովրդի կյանքում:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ այս իր խորհրդի պետությունը գորակցում է մտերմական կապերը Հունաստանի բարեկամական Հանրապետության հետ՝ նշելով, որ հայ ժողովրդը դարձել է վերադառնալով հայրենիքին եւ հայրենիքին: «Դուք կըլնեք եւ երջարության եւ երկրի...»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ շնորհակալություն հայտնելով նրանց հայրենիքին եւ հայրենիքին: «Դուք կըլնեք եւ երջարության եւ երկրի...»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ շնորհակալություն հայտնելով նրանց հայրենիքին եւ հայրենիքին:



նախում եւ այն ծանր օրերը, երբ մեր ժողովրդին աղետավորված օգնության կարիք ուներ, եւ ՄԱՆ-ից մեր նվիրյալ զավակները եղան առաջիններից, ովքեր փութացին օգնություն ցուցաբերել աղետյալ մեր զավակներին Հայաստանի մեջ: Եվ այդ առիթով Վազգեն Վեհափառի օրհնությամբ հիմնադրվեց ՀՅԴ-ի Այդ տարիներից սկսած՝ ՀՅԴ-ի

իրականացմամբ շատ մեծ իրագործումներ են տեղ գտել հայրենական մեր կյանքում»,- ասաց Նորին Սրբությունը: Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց աշխատանքները շարունակելու առիթով: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նաեւ հաժակ արքեպիսկոպոստին՝ Ժրաշան եւ արգասավոր ծառայության համար:



Ամենայն Հայոց Հայրապետը շնորհակալություն հայտնեց Նախագահին՝ տարբեր ոլորտներում Հայաստանի մշտապես ցուցաբերվող աջակցության, Հունաստանում բնակվող հայ համայնքի կյանքում ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար եւ գոհունակությամբ արձանագրեց նաեւ, որ Հունաստանի իշխանությունների տրամադրած կրթաթոշակի շնորհիվ՝ ամեն տարի Մայր Աթոռի միաբաններին երկուսը շարունակում են հոգեւոր ուսումնառությունը Հունաստանում:

Հունաստանի Նախագահին իր հերթին շնորհակալություն հայտնեց շեքն ընդունելության համար եւ նշեց. «Թե՛ Հայ եւ թե՛ Հունի Ե-

կեղեցիները պատմության ընթացքում պայքարեցին բարձր դեպքերի համար՝ ի խնդիր հավատի: Ի՛նչ պիտի լինե մեր ժողովրդների ապագան առանց մեր Եկեղեցիների...» ընդգծելով, մայնքի կյանքում ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար եւ գոհունակությամբ արձանագրեց նաեւ, որ Հունաստանի իշխանությունների տրամադրած կրթաթոշակի շնորհիվ՝ ամեն տարի Մայր Աթոռի միաբաններին երկուսը շարունակում են հոգեւոր ուսումնառությունը Հունաստանում:

Հունաստանի Նախագահին իր հերթին շնորհակալություն հայտնեց շեքն ընդունելության համար եւ նշեց. «Թե՛ Հայ եւ թե՛ Հունի Ե-

ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Սր Սահակ - Սր Մեսրոպ» շքանշաններ մշակույթի գործիչներին



Հունիսի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Սր Սահակ - Սր Մեսրոպ» պատվո թարձը շքանշաններ հանձնեց հայ մշակույթի երեք անվանի գործիչներ Ավետիսյան Գրիգորյանին, Պրեմ Զեյթունցյանին և Ռուբեն Մարտիրոսյանին:

Հանդիսավոր արարողության ընթացքում մեծարյալների կյանքի ուղուն և ստեղծագործական վաստակին անդարձ արձան էրեանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմիտեի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար Երվանդ Ղազարյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Լեոն Մանյանը և կոմպոզիտոր Վարդին Բալյանը:

Հայրապետական սրբատառ կոնդակներն ընթերցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արհիվիկ տնօրեն Տ. Առողիկ քին. Կարապետյանը:

Տիկին Ավետիսյան Գրիգորյանին շնորհված կոնդակում ասվում է. «...Թատերաբեմ

հասարակությանը բաշտանոթ է սիրելի եմ Ձեր անունն ու բարձրարժեք դերակատարումները: Տասնամյակներ շարունակ Հուլի Զեր տաղանդն ու վարպետությունը հոգու ողջ նվիրումով ծառայեցրել եք հայ թատրոնին: Մեծ է Ձեր վաստակը Երեանի Հանրապետության անվան երաժշտական կոմիտեի թատրոնում, որի ներկայացումներն առանձնակի գունդություն և հնչողություն են ստանում Ձեր ուրույն դերասանական խաղով...»:

Տիար Պրեմ Զեյթունցյանին շնորհված կոնդակում ասվում է. «...Տաղանդավոր հայրերդ անունն ու գրական գործունեությունը հանրաճանաչ են ընթերցասեր լայն շրջանակներում: Հուլի արժեքավոր ստեղծագործություններով բարեգարգում եք հայ գրականության հարուստ անդամատանը՝ ազգային ու հավատավոր մտավորականի Ձեր արժանավոր մասնակցությունը բերելով մեր մշակույթի նորոգ գարթոնքին ու



հասարակական կյանքի առաջընթացին... Գոհունակություն է Հայրապետին համար հաստատել, որ Ձեր արդյունաշատ գործունեության ողջ ընթացքին մշտապես դրսևորել եք որդիական անկեղծ սեր ու հավատարմություն՝ հանդես Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և լուսավորչախառատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

«Ձեր նվիրումի ոգին Հուլի ամբողջա-



պետ արտահայտել եք երգարվեստի ասպարեզում՝ Ձեր աստվածաբարձե տաղանդը ի պատ բերելով արվեստի ճանապարհով Հայրենիքին ու հարազատ ժողովրդին ծառայելու առաքելությունը: Անվախիկ, տասնամյակներ շարունակ Հայաստանի և աշխարհի տարբեր բեմահարթակների ձեզ հատուկ ներշնչանքով Հուլի մատուցում եք մեր ազգային երաժշտության գոհարները՝ ունկնդիրներին գրավելով Ձեր ձայնի գեղեցկությամբ ու կատարողական բարձր վարպետությամբ...»,- մասնավորապես ասվում է Ռուբեն Մարտիրոսյանին շնորհված հայրապետական կոնդակում:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծարյալների կուրծքը զարդարեց «Սր Սահակ - Սր Մեսրոպ» շքանշանով, որից հետո շքանշանակիրներն իրենց երախտագիտության խոսքն ուղղեցին Նորին Սրբությանն ու ներկայիչներին:

Հանդիսությունն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով:

Ավարտին հանդես եկան «Նոր անուններ» ծրագրի պատանի երաժիշտները՝ ղեկավարությամբ Սիլվա Մեխիսյանի:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

«Խորհուրդ խորհմ, ամհաս, ամհալիզմ, որ գարդարեցեր զվերին պետությունը ի յառազատ ամհատոյ լուսոյն, գերապան՝ փառք գրաստ հրեղինաց»
Հայաստան Տարունքի

«Պատարագ» բառը թարգմանաբար նշանակում է «նվագ», «ընծա», «զոհ»: Հին օրենքում պատարագը գեներալ կենդանի կամ Աստծուն ընծայված պտուղն էր: Կենդանիների (ոչխար, գլխարակ, գառ, ուլ, այծ, տառակ, աղավի) գոհաբերումը հոգիների մաքրության համար էր արվում, իսկ անկենդանիները (գերմակ, ձեթ, խունկ)՝ զգայարանների սրբության համար: Նոր օրենքում ճշմարիտ Պատարագը Բրիտոսն է, որ եկեղեցում հանապազ բաշխվում է ամենքին: Նա՛ է փրկության ու գոհության ողջակեզը և բոլոր պարգեների լուսն: Այսօր քրիստոնեական եկեղեցին այս եզրն օգտագործում է երկու իմաստով՝ արտահայտելու համար Ա. Հնդդուրդյանի խորհուրդը և եկեղեցական ծեսերի մարդդական համակարգը: Առաջին իմաստը որդեգրել է Արեւելյան եկեղեցին, իսկ երկրորդը՝ Արեւմտյան եկեղեցին: Այսպիսով, Ա. Պատարագը հիշատակությունն է գերագույն այն գոհողության, որ մեր Տեղեկ կատարեց Գողգոթայի բարձունքի վրա՝ հաշտության կերելով Աստծո և մեզավոր մարդկության միջե: Պատվիրանազանությունը մարդին հեռացան Արարչից՝ զրկվելով Նրա առատաբուխ շնորհներից և մշտական օրհնությունից: Խաչի վրա հեղած պատվական իր արյամբ Բրիտոսը վերստին նորոգեց հոգեւոր այդ միությունը: Ուրեմն Նա՛ է ճշմարտապես պատարագվում մեր փոխարեն՝ բոլոր մարդկանց մեղքերի քաղության համար: Աստծո առաջ մարդկանց բարեքներն օրավոր բազմացան, քանզի արարածները ոչ միայն չհասեցին ճշմարիտ Արարչին, այլեւ ի հեռավոր Նրա՝ մտացածին չաստվածներ հորինեցին ու պես-պես սատանայաշունչ մոլորությունների գիրկն ընկան: Եվ բազմողորմ ու մարդասեր Աստված, տեսնելով բոլանդակ մարդկության անառակ ընթացքն ու այլասերված վարքը, մեղսաշաղախ ախտերն ու պիծ գործերը, զորաց իր արարչագործության համար: Սակայն իր երկայնամտության և ամենողորմության համաձայն՝ զբազ ու ներքե նրան՝ խաչի վրա մատուցված հավիտենական Պատարագով:

Այլե ունենք բանավոր ու մարմնավոր Պատարագ: Առաջինը մեր հոգին ու մարմինը սրբությամբ պահելն է, իսկ երկրորդը՝ գոհաբերությունն է ողջերի և մեռածների համար, ինչը լիովն է երեք տեսակի՝ հոգեւոր, հոգեմարմնավոր ու մարմնավոր: Առաջինը դեպքում Բրիտոսն է պատարագվում մեզ համար, երկրորդի դեպքում՝ մենք Բրիտոսին համար, իսկ երրորդի դեպքում՝ ունեցվածքը մեզ համար: Այսպես, Պատարագի օրհնանք մենք ունենք նահապետներից (Աբել, Նոյ, Արահամ) և Բրիտոսն Աստծուց: Բրիտոսն անձամբ հաստատեց Ա. Պատարագի խորհուրդը Սիոնի Կերեստանը վերջին ընթրիքի ժամանակ (տե՛ս Մատթ. Ի2 26-28, Մարկ. Ժ7 22-24, Դուկ. ԻԲ 19-20, Վ Կորնթ. ԺԱ 23-25): Աստվածօրոգու համբարձումից հետո առաքելները Ա. Հաղորդության խորհուրդը կատարում էին տեսնելով կիրակի երեկոյան: Արարողությունը բաղկացած էր ինկնություններից, սաղմոսներից, բարոյախոսություններից, աղոթքներից, հացի բեկումնից և հաղորդության բաշխումից, որոնց հետեւում էր հասարակաց սիրո ճաշը՝ ազապելով: Առաջին երկու դարերի ընթացքում Ա. Պատարագը՝ իբրեւ ծես, տակավին ձեւավորված չէր: Հետագայում այն աստիճանաբար բյուրեղացվեց՝ վերափոխվելով կայուն ծիսակարգի: Հավատարմի առաքելական ոգուն քրիստոնյաները սահմանական չորս դարերում կիրակի օրերին հավաքվում էին, կարդում սաղմոսներ, մարգարեական և առաքելական գրություններ: Օրհնվում էին հացն ու ջինին, որոնց էլ արարչաբարձում էին ներկայից:

Հայրապետական կոնդակ Կոտայքի մարզպետին



Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել Եպս Զարամյանին և Կոտայքի մարզպետ Կովակենկո Շահգալյանին:

Հանդիսման ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը մարզպետին հանձնեց «Սր Ներսես Շնորհալի» պատվո թարձը շքանշա-

նի հայրապետական կոնդակը՝ ի գնահատություն Հայոց եկեղեցուն մատուցած իր ծառայությունների: Տիար Շահգալյանի հովանավորությամբ վերանորոգվել է բարեգարդվել էր Ավարաք գյուղի Սր Աստվածածին եկեղեցին:

«Գոհունակություն է Մեզ համար գնահատանքի Մեր խոսքը բերել Ձեզ, որ բարի գործերով հաստատում եք Ձեր հավատն առ Աստված և սերը՝ հանդես Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Հուլի ազնիվ հոգով տրանձնեցիք Կոտայքի մարզի Ավարաք գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերանորոգության ու բարեգարգման հովանավորությունը՝ կարեւոր ավանդ բերելով ինչպես Ավարաք, այնպես էլ հարակից գյուղերում հոգեւոր կյանքի վերագործնքին: Գոհունակություն է Մեզ համար, որ հավատավոր Մեր զավակներն այսուհետ նորոգված սրբավայրի կամարների ներքո պիտի փառաբանական իրենց աղոթքը բարձրացնեն առ Աստված և շնորհակալ դառնան երկնային պարգեների», - ասվում է հայրապետական սրբատառ կոնդակում:

Մեծազո մարգվետն իր հեծքին, շնորհակալություն հայտնելով բարձր պարգեի համար, պատրաստակամություն հայտնեց ըստ ամենայնի օգտակարություն բերելու և աջակցելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Հունիսի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, հանդիսապետությամբ Լ. Ս. Օ. Տ. Տ. Հարեգին Փայրազյանի Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ, որի ընթացքում պատարագի Կիզել արք. Այվազյանի ձեռամբ յոթ սարկավազ ստացան քահանայական ձեռնադրություն և օծում: Զեռնադրող Կիզել արք. արագանը նորոգեց քահանայաներին վերականգնեց հոգեւոր նոր անուններով, Եղիկ արք. Հակոբյանը վերանվանվեց Տ. Մարտիրոս, Հայկ արք. Բաբերյանը՝ Տ. Պարթև, Արման արք. Գեորգյանը՝ Տ. Սիբաթ, Մարտիր արք. Մխիթարյանը՝ Տ. Գառնիկ, Երուարդ արք. Կաջարյանը՝ Տ. Սուշեղ, Հովհաննես արք. Սարգսյանը՝ Տ. Հրաչ, Արամ արք. Տեր-Մկրտչյանը՝ Տ. Թադևոս:

Զեռնադրությունից հետո Կիզել արք. Գառնիկ իր պաշտամունքը նորաձեռ քահանայությունի՝ անորարանալով հոգեւորականի պատասխանատու կոնքանը Հայոց եկեղեցուն և մեր ժողովրդի կյանքում, ապա՝ հորորդեց լույս առաքելություններով ու հոգեւոր շնորհներով: «Ձեռնից ունան անուններն ընտրվեցին որպես խորհրդանշիչ մեր այն հոգեւորականների, որ գոհվեցին 1915-ին, զոհվեցին հատուն Բրիտոսին, հանուն Հայ եկեղեցու, հանուն մեր ժողովրդի: Հուլի էլ ամեն օր պատրաստ պիտի լինեք զոհելու ձեր եկեղեցուն և ձեր ժողովրդի



համար», - ասաց սրբազան հայրը: Նույն օրը՝ երեկոյան ժամերգության ժամանակ, կատարվեց նաև վերադի տվության արարողություն: Տ. Պարթևը, Տ. Միքայելը և Տ. Գառնիկը, որպես կուսակալու քահանայներ, ստացան վեղար:

Մայր Աթոռում քառասուրյան պահեցողության շրջանն ավարտելուց հետո նորաձեռ եկեղեցականները հովակական ծառայության կկոչվեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկե-


ղեցու բեմերում և Մայր Աթոռի տարբեր կառույցներում:

Պատարագի արեզան արարողություններն էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերար, ամերիկաբնակ տեր և տիկին Թուֆայանները, տեր և տիկին Հարությունյանները, ԱՄՆ Արեւելյան հայոց բեմի բեմական խորհրդի ատենական Օսկար Զարթուրյանը և Մայր Աթոռի բարերար, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Յեմս Գալուստյանը:

ՀԱՅԻՑ ԳԱԾՈՒԿՈՒՄՆԵՐ
ՀՈՎՀԱՆՆԵՍ 2 ՍՍԵՅԻ
(1203-1220)

Սկզբը՝ թիվ 10-11

Միջիսրաբ Գռչըն ի վերջոյ համոզ-վեց, ի չնայած ձմեռ եր, 1208 թ. ինչոնեմեքսիին՝ քերես վերջերին, ողորտըվեց Անի: Այստեղ վիճակը ծածր եր: Ժողովականներն կեսը կողմ էր Կիլիկիայից եկած որոշումները ճանաչելուն, ինչ մոյսս կան ընդդիմանում եր դրան: Ժողովականները կամենում էին, որ Միջիսրաբ Գռչըն հանդիպի իրենց մինչև Ջաքարեան ներկայաճառը: Մական Ջաքարեան կամինքն ժողովականներին, ի Ներսես Կաղաղապետ Կեչառեցիմ, որ ուղարկված եր ժողովականների կողմից, մայան կարողացավ նրանց կամըն փոխանցել Գռչին: Վերջինս հայտնեց փափոխ կացութոյս մեջ: Ժամանակին իճըն եր հուշէ Ջաքարեան, որ հայոց մեջ հնում եղել եր այդ տնվորութիւյ, ուստի չէր կարող համոզես զայ Կիլիկիայից ե-



կամ որոշումների դեմ, սակայն չէր ի վարող օտարիչ արեւելյանների քննություն, որ նրանք հրաժարվեցն հնօրյա սովորություններից: Ժողովականների նշանակալից մասը հակված էր կարծելու, որ որոշումներն օտարների ճնշման տակ են ընդունվել: Գոչը պաշտպանեց Ջաքարենի դիրքորոշումը՝ առաջ բերելով ընդդիմադիրների գայությունը, որոնք սկսեցին նրան բաժանել, եթ քաջակցում է Ջաքարենին: Իր վարվելակերպը Գոչն արդարացում էր նրանում, որ չի կանխում, որ Ջաքարեն վրացացված խառն իր եղբոր պես, երկբայապես ճիշդես կարող է ինքն հակադրվել Կրիլիկայից եկած որոշումներին: Ին միայն փորձում է Ջաքարենին համոզել, որ ընդդիմադիրները Եկեղեցուց չիտաջվեն եր պահեն իրենց պաշտոնները: Սակայն Ջաքարեն, առանց Գոչին տեղյակ պահելու, ընդդիմադիրների ղեկավարներից զրեց պաշտոններին: Գոչը, լուր տանելով այդ մասին, ուժգնորեն միջնորդեց, եր նրանցից շատերը վերադարձան իրենց վիճակները: Եկեղեցական ժողովը ոչնչի չիանգեց: Ջաքարեն արեց՝ եր կանխում էր, իսկ ինգեուրականները շարունակեցին ըստ հնավանդ սովորույթի առաջնորդվել:

Վերադառնա՞նք կրկին Կիլիկիա, որտեղ Անտիոքի խնդիրը ամբողջ ուժով քաղաքական ապարեզ էր նետվել: Լեոն արքան շարունակում էր բոլոր հնարավոր միջոցներով իր որդեգրած Ռուբեն-Մատթեոսին համոզել Անտիոքի:

իշխանությունը։ Ռուբեն-Ռայմոնդին որոշեցրելով՝ Լեոնը արքան, փաստորեն, Կիլիկիայի Հայոց թագավորությանն էր միացնում Անտիոքի դքսությունը։ Իսկ այդ միացյալ պետությունն ի վիճակի կլիներ ազատագրելու րուն Հայաստանը։ Վրաց թագավորությունը՝ դրան հակառակվել չէր կարողուհանա, քանի որ նրա հզորությունը հինքը ընդե հայերն էին։ 1209 թ., սրբ Ռուբեն-Ռայմոնդն ընդամենը 12 տարեկան էր, վերջինս պաշտոնապես իռչակվեց թագաժառանգ։ Նույնիսկ փոքր արվեց Հայնիքը Ջ-ին հաջորդած Օրոն Դ-կայսերը դիմել է թագավորական թագ խնդրել Ռուբեն-Ռայմոնդի համար, ինչը հասարակեց 1211 թվ. ռգուստոսի 15-ին։ Այդ նույն տարում Լեոնը երկրորդ անգամ ամուսնացավ Կիարոսի թագավոր Էղուզին քրոջ հետ, որը հանձնույցյա Ամորի Լուսինյանի դուստրը էր և Ջարել աճուն էր կրում։ Կիարով Լեոնը բնակեցավ դարձավ Քոհնեմուղ Տփր-պոլսեցու հետ, որը Ջարելի քույր Սիլիեմնոի հետ էր ամուսնացած։ Լեոնի հարսնանքը, որոշ տվյալների հիմամբայն, եղավ Ստում, այլ տվյալներով՝ Լեոնը դրա համար գնաց Կիարոս։ Դատելով Կիրա-սու Գաճնակեցու տվյալներից՝ ամուսնանքը թաղաքական բնույթ էր կրում, սակայն պատմիչը թագավորին մեղադրում է նաե ինպ-պությունքան մեջ, ինչը ճիշտ չէր, քանի որ Հայոց արքան, իր անհա-վատարին կնոջը՝ Վահկա քսանըը նետելով 1205-ին, նոր ամուսնու-թյուն կերեց միայն 5 տարի անց։ Չի բացառվում, որ այդ ընթացքում նրա կլինե արդեն մահացած լինեք։ Թագավորի տաաքները եղավ Ջա-բելը, որը ծնվեց 1215-ին։ Լեոնին առաջին կնոջից ծնված Ռիքա ա-նունով դուստրը, որին Լեոնը համեմատ էր իր մայր Ռիքայի հանքերին, 1215 թվին կնոթարեց

տրվեց ժամ դը Բրիենին, որն անվանապես կրում էր Երուսաղեմի թագավորի տիտղոսը:

Մտավորապես այդ ժամանակներում մահացավ Դավիթ Արքայադանին անվանակալ կարողությամբ, մինչ այդ մահացել էին Բարսեղ Անեցին և Անանիա Սեբաստացին: Ձաքարեն չբոյաւորեց, որ Բարսեղ Անեցուն որեւ մեկ հաշորդէր, որ արեւելյանները չուծեալանան, սակայն օրէկտիվորեն դրամով օգնեց Հովհաննէս կարողութիւյ հիդրի անդալորմամբ: Լեւոնն էլ Դավիթից հետո որեւ մեկին կարողութիւն չյարձրեց, և բազմալորի ու կարողութիւ հարաբերութիւններն սկսեցին նորմալանալ: Դրան նպաստեց այն իրողութիւնը, որ կարողիկըսը եւս հրաժարովեց իր ինչ-ինչ հաճակներութիւններից, առավել եւս, որ նրանք բշմամանալու պատճառ ծառայալ բեռնալ շնորի և բեռնորդի Կոստանդի բանտարկութիւն մալարտով էլ վերջցինանքիս մախով: Հնդի Լամբրոնցիսի, որ ծառայութիւններ էլ մատուցել Լեւոն արքայիս, Ռուբեն Ռայմունդի համար թագ բերելուց հետո կարողացալ նրանց հաշտեցնել: Լեւոնը բանցից ազատեց Տոսիսի և Բողովի Կամարտիսաներից, և հաշտութիւնը կայացալ: Թագալորը Հովհաննէսին վերադարձրեց հայրաքանակալ կալվածքների հատարները, իսկ Ռուբեն Ռայմունդի բազմաթաւանգական օրհնութիւն հանդերձ կատարեց հայոց հայրաքանի:

Տեսնելով, որ Եվդուսյայից օգնություն չկա՝ Լեւոն արքան կրկին փորձեց ուժով լուծել Անտիոքի խնդիրը։ Շատ լատինի կողմավորներ հալածվեցին կամ երկրից դուրս վտարվեցին, որի համար հայոց արքան քանադոլվեց չոնոփ պապ Ինովկենտիոսի կողմից՝ 1211 թվին։ Հայոց արքան եւ կաթողիկոսը



սը դրան բանի տեղ չորեքին հե
1212 թվի հունվարի 6-ին խաչա-
կիր իշխանների մասնակցությամբ
արտասովոր շքեղությամբ նշեցին
քրիստոնեությունը: 1212 թվին արշավանք
ձեռնարկվեց Անտիոքի դեմ, և
վերջինիս համեմակեց Ռուբեն-Ռա-
յանոնին: Խաչակիր իշխանների
վերադարձվեցին բռնագրավված
դղակները, երկրի վանական-
գիտնորքը բացվեցին վանիտի-
նի և Ջնովակի առետրակամերի
առջեւ, որին որպես պատիսխան
Հռոմի պապը է վերացրեց իր բա-
նադարձքը, քանի որ նրա նախ-
տակը երուսաղեմի ագառանու-
րյան գործի մեջ Լեւոնին ներգա-
վել էր: Դրապի այդ նպատակու-
Լատերեւում ժողով հրավիրեց, ո-
րին հրավիրվեց նաեւ հայոց Հով-
հաննէ կարողիդ: Լատերեւում
ժողովին, որը տեղի ունեցավ 1213
թ. նոյեմբերի 11-ին, մասնակցեցին
71 արքեպիսկոպոս, 412 եպիսկո-
պոս և 800 վանաժայկ ու վարդա-
պետ, սակայն հայերի մասնակ-
ցությամբ մասին տեղեկություննե-
րը չկան: Թերեւս դա պետք է բա-
ցատրվի այն իրողությամբ, որ Լե-
ւոնի մոտ չկարողացան հաղթել
հեռավոր լեռնային տարածքում
նրանց քաղաքին:

Շարունակությունը՝ էջ 4

ՄԱՍԼՈ ՇԱՂՈՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Գեորգյան ինքնուրույն ձեռնարանի եւ Սեւանի վազգենյան դպրանոցի
2006-2007 ուսումնական տարվա փակման միացյալ հանդիսությունը**



Հունիսի 14-ին Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածնում՝ Կեհարանի հանդիս-
տանքների տրափում, Ամենայն Հայոց
Կաթողիկոսի հանդիսագետությամբ
տեղի ունեցած Գեղորդյան հոգեհո-
ճեմարանի եւ Սեակնի Կազգեայան հո-
գեհոլ դպրանոցի 2006-2007 ուսում-
նական տարվա փակման միացյալ
հանդիսությունը: Այս տարում Գեղոր-
դյան ճեմարանը տվեց 31 շրջանա-
վարը:

Տեսչական ամենամյա գեկույցով հախճառ եկավ Գեորգյան ճեմարանի տնօրէն Վազգէն Վրդ. Նանյանը: Ներկայիս ճեմարանում ուսանող եւ 135 տասն: 2007 թ. 54 սարկավագ պաշտպանել են իրենց կարգադրաճառերը, 71 տասն ճեմադպրակ սարկավագ: Ուսումնական տարվա ընթացքում ճեմարանականները պարտադրաբար այցելել են տարբեր մանկատներ, հատուկ դպրոցներ, համաժողովակցել երիտասարդական եւ ուսանողական միութիւնների հետ, թղթակցել թերթերին:

պատրաստել ռադիո և հեռուստահա-
ղորդումներ: Նա նաեւ իր երախտագի-
տությունը հայտնեց Նորին Սրբության-
ը՝ ճեմարանի հանդեպ պոնաբրեկոլո
մայուն ուշադրության եւ հոգածու-
թյան համար:

Այնուհետև անցյալ ուսումնական տարում արձանագրած ձեռքբերումներին անդրադարձավ Սեանի Վագ-գենյան դպրանոցի տեսուչ Մկրտիչ Սողոմոնյանը:

Դպրանոցը ներկայումս ունի 71 ուսանող, որոնք թվում է սաներ հրաքից, գերմանիայից, Յուգոսլավիայի, Իրանաստանից և Սիրիայից: Ծննդավայրայինների շահեցրվող հրապարակվել են հինգ ամսվա ծառայողական աշխատություն: Սաներն իրենց ծառայությունն են բերում նաեւ Գեղարքից իրենց ներկայությունը: Հաշվարկվում շարունակվում է «Կանաչ-աստվածաբանություն» քննադատական առարկայի դասավանդումը ուղղանցումը:

ից ճախրապետը: Սորին Սյուրբուխի
իր ուրախությունը հայտնի 33 կրթու-
թյան եւ գիտության նախարարության
կողմից Գեորգյան ճեմարանին տր-
ված բարձրագույն հաստատության
հավատարմագրերի, ինչպես նաեւ եր-
կու ճեմարաններում արձանագրված
հաջողությունների անտրոփյամբ:

«Իրապես, մենք պիտի կարողա-
նանք մեր երագած ուսյալ, մտավորա-
կան կկարագործել եւ խառնվելու ունե-
ցող եկեղեցականներով օժտել մեր ե-
կեղեցին, բարձրացնել պատրաստու-
թյունը մեր եկեղեցականների, որո-
ւնքանակով է միաժամանակ բարձ-
րացնել եւ ծաղայության որակը մեր ե-
կեղեցում եւ մեր ժողովրդի կյան-
քում», - ասաց Հայոց Հայրապետը՝ ի-
գնատախառնել հայտնելով ճեմարան-
ների տեսչությունների, մանկավարժ-
ների եւ ճեմարանականների՝ իրեն-
սկիւրովի, անհոգաբեկ աշխատանք-
ու պատասխանատվության բարձ-
րագաղտի համար։

**Ի Տեր հանգյալ հոգեշնորհ
Տ. Տրդատ Բեդլա Մարտիրոսյանը**

Հունիսի 25-ին
երկարատև ծանր
հիվանդությունից
հետո վախճանվեց
Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածնի միաբան
Տրդատ արքեպիսկոպոս
Մարտիրոսյանը:

Տրդատ Կարամյան
Մարտիրոսյանը (ավագանի անու-
նը՝ Յովհաննես) ծն-
վել է 1973-ին Էջ-
միածին քաղաքում:
1989 թ. ընդուն-
վել է 1995 թ. ա-
վարտել է Գեղու-
գյան հոգեւոր ճե-
մարանը: 1995-ին
ձեռնադրվել է սար-
կապաղ, իսկ 1996 թ.
նույնպիսի քահա-

Զեռնադրություն
 Լոր ճեմարանում
 նախկին է Բուլղար
 հոգեւոր հովիւ:
 Յունիսի 27-ին
 փոխվեց միաբան
 Ձեռնադրում:

**Կար
Տ. Ավետ**
Ն. Ս. Օ. Տ. Տ.
Ամենայն Հայոց
նորոգման կարգա-
միաձեռնի միջաբան
ծառայությունն է
թացքի համար:
Կարգավորյա-
նաշխարհական
նի առումով:



...որպես վերակացու: Այնուհետև նշանակված հայրիկի հայրը թեմում Պրովիդիվում որպես հոգեվարձ հայր սուրբի մարմինը աշխատանքի է անցնում:

Կարգալույծ է հռչակվել
Տ. Ավետիսյանի աբեղա Սահակյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Մայրապետյան Գլխավորապես
Լեւնգան Էայոյ Կարողիկոսի հայապատկան առօրե
Նոյսրայ հարգալոյս Է հռչակել Մայր Աթոռ Սուրբ Էջ
միածնի միաբան Լեւոնիս արեւա Մահակյանը հոգեւոր
մասնաւորը ինքնակամօրե լրելու կանոնակարգ ըն-
թացիլ համար:

Կարգալոյս հռչակված արեւա այսուհետ կղատվ
աշխարհականների շարքը Լրտակ Մահակյան ավագա-
նի անունով:

ԻՌԱՆԵՆ ՏՈՒՐՈՒՍԿԻ

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆԱԽԱԽՆԱԿԱՐԹՅՈՒՆ

ՍԼՊԻՐԵՐԻ ԹԻՎ 2-11

Ար Դորոթեոսը պատմում է. «Ստորկ-
ներ բերող մի նավ գալիս է մի քաղաք, ուր
ապրում էր մի սուրբ կույս: Վերջինս, լսելով
այդ նավի ժամանման մասին, շատ է ուրա-
խանում, որովհետև կամենում է զննել իր
համար մի փոքր աղջիկ՝ մտածելով.
«Կվերցնեն ու կղաստիարակեն նրան, ինչ-
պես ցանկանում եմ, որպեսզի նա բնավ չի-
մանա այս աշխարհի արատները»: Մարդ
մոտեցավ նավատիրոջ մոտ՝ վերջինս
կանչում է իր մոտ է իմանում, որ նրա մոտ
այդ երկու փոքր աղջիկ՝ ճիշտ այնպիսին,
ինչպիսին ինքն ուզում է, եւ իսկույն ուրա-
խությամբ տալիս է դրանցից մեկի գինն ու
աղբկան վերցնում իր մոտ: Երբ նավատերը
հեռանում է այն վայրից, որտեղ գտնվում
էր այդ սրբուհին, իսկույն ճանապարհին
նրան հանդիպում է մի պոռնիկ կին՝ չափա-
զանց անառակ, եւ տեսնելով նրա հետ
մյուս աղջկանին՝ կամենում վերցնել նրան:
Սակարկելուց հետո գինը տալիս է, աղջ-
կան վերցնում է հեռանում: Սեսոն՝ մե-
կատն գործերը: Տեսնո՞ւմ եք Մատնո դա-
տաստանը: Ո՞վ կարող է այն բացատրել: Ի-
րոք, այն սուրբ կույսը վերցնում է փոքրի-
կին եւ Մատնո երկրորդ դատարանում
խրատելով ամեն բարի գործի համար, կր-
թելով մենակեցական վարքի եւ, իր խոս-
քով, սուրբ պատվիրանների ամեն տեսակ
անուշահոտության մեջ: Իսկ պոռնիկը,
վերցնելով այն խեղճին, դարձնում է նրան
սատանայի գործիչ, որովհետև ուրիշ ԽՆԶ
կարող էր այդ անբարոյականը սովորեցնել,
եթե ոչ հոգին կորցնելը: Այսպիսով՝ ԽՆԶ կա-
րող ենք առել այս անավոր ճակատագրի
մասին: Երկուսն էլ փոքր էին, երկուսն էլ
վաճառվեցին՝ իրենք էլ չիմանալով, թե ուր
են գնում, եւ մեկը հայտնվեց Մատնո ձեռք-
երում, իսկ մյուսը՝ սատանային: Ո՞վ այս իրո-
ղության մեջ հասու կղանա Մատնո գործե-
րի խորությանն ու խորհրդավորությանը:
Քո դատաստանները, Աստված, խոր ան-
որոշ են:



Նմանատիպ բան իմացել է նաեւ Գրի-
գոր Մեծն իր ազգականների շրջանա-
կում: Այս սուրբ մարդը երեք հորաքույր
ուներ՝ Եմելիանա, Տարսիսն եւ Գորիա-
հա, երեքն էլ իրենց կյանքն ընծայում են
Քրիստոսին՝ մտնելով կանանց վանք:
Նրանցից երկուսը, իրենց ուխտերը հա-
րաշատմորեն պահելով, միկեն կյանքի
վերջ պատվով մնում են կուսության մեջ:

Իսկ երրորդը՝ Գորիանան, չլսելով ոչ մի
խրատ ու չհնազանդվելով վանական իշ-
խանությանը, խզում է սուրբ քույրերի
հետ իր հարաբերությունն ու հեռանում
Նրանցից՝ տրվելով աշխարհիկ կյանքի:
Քո դատաստանները, Աստված, խոր ան-
որոշ են:

«Աստված մեծ է Իր գործությամբ, ամեն
ինչ պահում է Իր ամրությամբ, եւ ո՞վ է Նրա
նման հզոր: Ո՞վ կարող է ընկել Նրա գործե-
րը եւ ասել Նրան. «Նու արդար չես վար-
վում» (Պր Լ2 22-23): Խոհեմաբար եւ մեծ
զգուշությամբ է այս մասին խոսում թագա-
վոր մարգարեն՝ իր մասին ասելով Մատ-
նոն. «Ես արհամարհվեցի ու չհասկացա.
Իբրեւ անասուն եղա Քո առաջ» (Մաթ. 3Բ
22): Ուրիշ խոսքով՝ «Քո գործերը չեմ փո-
ռնում, Աստված, ես, որ ոչնչություն եմ Քո ա-
ռաջ, ինչպես անասունները: Իմ գործը Քո
ձայնը լսելն ու իմ Տիրոջը հնազանդվելն է՝
առանց ընկնել Քո գործերն ու նախասա-
մանությունները»:

Դա դեռ զարմանալի չէ, որ Դավիթը, ով
մատուց տարիքից նախիր էր արածեցնում
եւ բարձրագույն գիտություններով չէր
զբաղվում, իրեն տեսնում է իր մասին դա-
տում էր համեմատաբար՝ իր սրտի բարո-
ւթյան պատճառով եւ Մատնո ներշնչմամբ:
Սակայն սերովբեներն իսկ՝ Մատնո սպա-
սավոր բարձրագույն հոգիները, նույն
կերպ են վարվում Մատնո առաջ: Որովհե-
տեւ երբ Տիրոջ հոսքը երկնքում ու երկրի
վրա հայտարարեց Մատնո կողմից հրեա-
րակ մեղքման մասին, այդ ժամանակ վե-
րովբեները, որոնցից յուրաքանչյուրը սե-
ցական թեւ ունի, երկուսով ծածկեցին Ի-
րենց եղբւր, երկուսով՝ իրենց ուղեղը, իսկ
մյուս երկուսով թռչում էին՝ դրանով ցույց
տալով, որ իրենց մտքով չեն կարող հաս-
կանում Մատնո խոսքին, որում կատարվում
էին Մատնո իրաշալին եւ անհասանելի գոր-
ծերը, որովհետեւ արարածի միտքը չի կա-
րող հասու դռնաշյուր իր Արարչի ամենակա-
րող աստվածային խորհուրդներին: Բա-
վական է, որ արարածներն իմանան եւ վա-

տահ լինեն, որ եղբւրյան Աստված սուրբ
է, եւ միմյանց առաջ խոստովանեն Նրա
աստվածային անճանելի կատարելու-
թյունները՝ աղաղակելով դեպի Նա.
«Սուրբ, սուրբ, սուրբ, Տեր՝ գործությունե-
րի. երկնքն ու երկիրը լի են Նրա անսա-
ման փառքով» (Ես. 2): Եթե երկնային բա-
նական հոգիներն այդպես խոնարհվում են
եւ խոստովանում աստվածային խորհրդի
անհասանելիությունը, ապա առավել եւս
մեզ, որ փխրուն հող ենք, թե՛ն Մատնո
շնորհով ստացել ենք «կյանքի շուկ» եւ բա-
նականության խոսք», վայել է խոստովա-
նել Մատնո առաջ՝ ասելով. «Տերն արդար է
Իր բոլոր ճանապարհներում եւ սուրբ՝ Իր
բոլոր գործերում» (Սաղմ. ԺԿՂ 17):

Աշխարհում հաճախ իրաշալի հեղաշը-
ջումներ ու փոփոխություններ են տե-
ւանում, անսպասելի իրադարձություններ,
շատ բաներ կան մեր կյանքում, որոնցից
յուրաքանչյուրի համար կարող ենք հար-
ցական կեցվածքով ասել. «Տեսնե՞ք՝ սա
ինչով կվերջանա: Ժամանակ այն ժամա-
նակ մեզ հետ էլ է պատահում ապախիսի
բան, որ զարմացնում է իր անսպասելիու-
թյամբ, եւ մենք անտեղի տրտնջում ենք՝ ա-
սելով. «Չէի մտածում ու կռահում, որ այս-
պես կպատահե՞ր: Որքան թշվառ ու աղետ
ենք մենք ապագա իրադարձությունների
կակախատության մեջ: Նույնիսկ ներկա-
յում տեղի ունեցող իրադարձություններում
մենք հետաքրքիր ենք կարողանում հա-
կանալ դրանց իրական պատճառները, բա-
ցի մեկից, որը կա բոլոր իրադարձություն-
ներում եւ ճշմարիտ ու աներկբա պատճառ
է: Այս կամ այն բանը պատահում է այն
պատճառով, որ այդպես է պետք եղել Մատ-
նո, որ դա կազմակերպի կամ թույլ տա՝
ըստ իր իմաստուն, մեզ համար անհայտ,
սակայն միշտ արդար ու բարի նախախա-
մութային: Ի՞նչ խորհուրդները ձեր խոր-
հուրդների նման չեն, եւ Ի՞մ ճանապարհ-
ները ձեր ճանապարհների նման չեն,- ասում
է Տերը:

Շարունակությունը՝ էջ 6

Հայր ԿԻՐԻԼ (Դավիթ)

Քարոզ ներելու մասին



Միքելի՝ եղբայրներն ու քույրեր,
Ավետարանում Հիսուս Քրիստոսը
մի անգամ չէ, որ սովորեցնում է մե-
րեք մեծավորների՝ մեր դեմ գոր-
ծած հանցանքների համար, որպես-
զի մեր մեղազանգործություններն էլ
մերկեն: «Եթե դուք մարդկանց մե-
րեք իրենց հանցանքները, ձեր երկ-
մալոր Հայրն էլ ձեզ կներել: Իսկ եթե
դուք մարդկանց չներել իրենց հան-
ցանքները, ձեր Հայրն էլ ձեզ չի ների
ձեր հանցանքները» (Մատթ. 24-
15),- այս է մերդեպի ճերբազատվե-
լու ամենահեշտ, ամենքս միմյանց
մայր մասնակցի եւ մշտական մեր
կամքից կախված միջոց: Թույլն է՝
իրենց փրկության համար հանձնա-
րարված մյուս հեշտակ միջոցից կա-
րող են օգտվել բոլոր մեղավորները,
եւ քրիստոնեական համայնքներում
այլեւս մեղավորներ չեն մնա: Սա-
կայն սրտագետ Աստված կանխավ
կայն սրտագետ Աստված կանխավ
գիտի, որ մոլի, ինքնասեր ու իշխա-
լաբ մարդկային սիրուն ամանափքին
է ընդունակ հնազանդվելու խոհանո-
րության ու հեղուքային այդ պատվի-
րանին, ավելին՝ մույմիսկ հենց Իր
հետևորդների մեջ շատերը խոն
լսելու է անբարյալական կատա-
րելու համար այս փրկչական պատ-
մարբեր: Մա եւ պատճառը, որ Տերն
անբարոյաբան համարեց բազմիցս
խոսել այդ մասին:

Իմ դեմ մեղանչի, պետք է ներեմ
դրան. մի՞նչե՞ յո՞ք անգամ: Հիսու-
սը նրան պատասխանեց. «Քեզ չեմ
ստում, քե՛ մի՛նչե՛ յո՞ք անգամ, այլ
մի՛նչե՛ յորդանանում անգամ յո՞ք»
(Մատթ ԺԷ 21-22): Այսինքն՝ քանի
անգամ էլ եղբայրդ մեղանչի քո դեմ,
դու պետք է մշտապես ներես, էլ չեմ
կաննում. գնա՞ց դրանք եւ ոչ մի
դեպքում չպետք է վրեժ լուծել նրա-
մից: Եվ որպես այդ պատվիրանի
հաստատում՝ Տերը պատմեց մի
սքանչելի առակ՝ Իր պատվիրանը
մատուցելով մի ամբողջական
պարտապահի կերպարի միջոցով,
որին արդեն ներել էին եւ պարտքն
էլ իրեն չընդրեի, ավսպիսի իր եղբայ-
րակցի նկատմամբ դրսևորած դա-
մաբարեկամ պատճառով կրկին ըն-
կավ ծանր կացության մեջ: Այս օ-
կավ ծանր կացության մեջ, որպեսզի
քիմանք նրա համար է, որպեսզի
մեներ ավելի լավ տեսներ, քե՛ ինչ է
լինում դրանց հետ, ովքեր չեն մե-
րեք իրենց դեմ մեր գործածներին,
ինչպես նաեւ՝ որպեսզի լավ հաս-
կանանք, որ մեզ հետ էլ կարող է
մնա՞նք թա՞ պատահել:

Այսպես՝ «Երկրի բազմաթուր-
քյունը ճանաչում է մի բազմավորի,
որ կամեցավ ծառաների հետ իր
հաշիվները կարգադրել: Եվ երբ պե-
տք հաշիվել ընդունել, նրա մոտ
բերվեց տասը հազար քաճաքի մի
պարտապահ: Եվ քանի որ նա
վարելու քան չուներ, նրա տերը
կարգեց շատ քանձերից նրան եւ նրա
հրամայեց կաճառել նրան եւ նրա
կնոջն ու որդիներին եւ այն ամենը,
ինչն ունի, եւ պարտքը հատու-
ցել: Եվ ծառան, գտնալով ընկնելով,
երկրպագում էր նրան եւ ասում.
«Համբերո՛ղ եղբի՛ր եմ հանդիս, եւ
քո խոսքի կնձառնե՛ք թե՛ք: Այդ ծառայի
քոտը կվճարե՛մ նրան եւ տերը գրավով
արձակե՛ց նրան չնորից: Իսկ ծա-
ռան դուրս ելնելով գտավ իր ծառա-

ծազավոր՝ մեր Տեր Հիսուս Քրիս-
տոսը, Ով բազմավորների ծազա-
վորն է եւ Տերը՝ բոլոր տիրակալնե-
րի: Եվ կան հպատակներ՝ մեր քո-
յուր Հիսուս Քրիստոսին՝ որպես
միակ ճշմարիտ Մատնո, Հոր եւ
Մուրը Հոգու հետ միասին, հալա-
սացողներն՝ Նրա արդար արայա-
հավիտեական կործանումից փրկ-
վածներն, որ պարտավոր ենք մա-
քուցել սրտով ու հոգով սիրել Նրան
եւ մեր խոնարհումը բերել: Նրան՝
որպես մեր Տիրոջ, մեր Թագավորի,
մեր Արարչի, պարտավոր ենք ըն-
թարկվել ու ծառայել սիրահոծոր
ն ամենամեծ խոնարհությամբ:

Ներկայիս բազմավորություն-
ում կան օրենքներ եւ իրաւահա-
մեր, որով որոշարկվում են հալա-
կանների գործունեության շրջա-
նակները, իսկ Մատնո բազմավորու-
թյունում էլ գործում է աստվածային
օրենքը, որ սովորեցնում է մեզ, քե՛
ինչպես պետք է լինե՞ր մեր Թագա-
վորին՝ Հիսուս Քրիստոսին եւ մեր մեր-
ձավորների հանդեպ, որպեսզի չա-
հանք երկնային մեր Թագավորի ո-
ղորձանքությունը եւ չարժանանա՞ր
Նրա գալույթին ու պատժին: Ինչ-
պես երկրային բազմավորությունում
բազմավորը երբեմն-երբեմն պա-
հանցում է իր հալապետներից հաշ-
վավորություններ տալ իրենց վրա
զրկված պարտականությունների
կատարման մասին, այդպես էլ
Մատնո բազմավորության մեջ Տերը
պահանջում է մեզանից մեր բոլոր
մտքերի ու ցանկությունների, խոս-
քերի ու գործերի հաշվառությունը:
Եվ այդ օրը մայրաքաղաք է որպես
սարապիկի դատաստանի ու ար-
դար հատուցման օր: Բայց մի՞նչ
իմ բազմավորություններում կան
բազմավոր եւ հալապետներ, այդպես
եւ Մատնո բազմավորությունում կա

եր մահվան օրը մեր հոգին, ան-
ջատվելով մարմնից, կհայտնվի հո-
գիների աշխարհում, եւ Տերը մեզա-
մից կպահանջի հաշվառություն:
Ամեն րոպե ամիսածնյա եւ պատ-
րաստ լինել մահվան եւ Մատնո դա-
տաստանին, այդ իսկ պատճառով
է մեզ պատվիրված է փորձել մեր
խիղճն ամեն օր եւ ոչ քե՛ս ապաշխա-
նել միայն որպեսզի մի շրջանում,
հարկ է ողջ կյանքն անցկացնել ա-
պաշխարհման, որպեսզի մահը
չի դեպքում մեզ չգտնի չապաշխա-
րած:

Իր պատշաճ տուրքը բազմա-
թիվ տված եւ իր պարտականու-
թյունները կատարած հպատակը
դառնում է բազմավորի պարտապա-
հման, եւ որքան երկար այդ ժամա-
նակահատվածը, այնքան կշատա-
նա իր կատարելի հպատակը, եթե
չի կատարել այն, ինչը պահանջում
է նրանից աստվածային օրենքը,
դառնում է Մատնո պարտապահը:

Շարունակությունը
Թարգմանությունը
Սյուրանա ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ԿԻՆՆԵՐԿԱԿՈՒՄ

Մեր եկեղեցու հինգ զվաճող կամ տարավար տոներից մեկը մեր Տիրոջ՝ Հիսուս Երիստոսի Պայծառակերպության կամ Այլադրության տոնն է:

Տե՛ր հայր, համառոտ վերհիշենք պայծառակերպության դրվագը: Ինչպե՛ս պայծառակերպվեց Երիստոսը, ո՛րն էր խորհուրդը:

Տիրոջ պայծառակերպությունն աստվածային հայտնության մի հանդես էր երկրի վրա: Երիստոսի՝ հավիտենական Աստված լինելու հանգամանքն ամբողջացավ, բացահայտվեց պայծառակերպությամբ: Ասկայն մինչ խորհրդի անդադանալով՝ վերհիշենք, թե ինչ դեպքեր նախորդեցին պայծառակերպությանը: Հիսուսը ցանկանում էր իմանալ, թե ինչ է մտածում ժողովուրդն Իր մասին: Պետրոս առաքյալը զանգվածում է Երիստոսին՝ որպես Աստծո Որդու՝ ասելով. «Դու ես Երիստոսը՝ կենդանի Աստծո Որդին» (Մատթ. Ժ2 16): Այս դավանությամբ Պետրոս առաքյալը դարձավ հավատքի, դավանության վեճը: Ասկայն, երբ Տե՛րն առաքյալների հետ խոսում էր Իր չարչարանքների, խաչի մահվան մասին, նույն Պետրոս առաքյալն անորոշվում է՝ ասելով. «Եսվ՛ լիցի Բեգ, Տե՛ր, այդ Բեգ չի պատահի» (Մատթ. Ժ2 22): Երիստոսը պատասխանում է. «Եստե՛ս գնա, սատանա՛, որով զայնպիսիություն ես ինձ համար, որովհետեւ ըր խորհուրդն Աստծունը չէ, այլ մարդկանցը» (Մատթ. Ժ2 23): Ուրեմն, առաքյալներն էլ խորհուրդում չէին ընկալում Երիստոսի թագավորության խորունկ անդունդները, ուստի անորոշ վիճակում էին գտնվում, չէին հասկանում՝ ինչպես կարող է մեռելների հարություն տվող, հրաշքներ գործող իրենց Վարդապետը խաչի անարգ մահով մեռնել: Առաքյալների հետ ունեցած այս խոսակցությանը հաջորդում է պայծառակերպության դրվագը: Հիսուսը, Իր հետ վերցնելով Իր ամենամեծերի՝ աշակերտների՝ Պետրոսին, Հակոբոսին եւ Հովհաննեսին, բարձրանում է Թաբոր լեռ՝ աղոթելու: Աղոթքի ժամանակ Նրա դեմքից երկնային լույս է ճառագայթում, Նրա գգեստները դառնում են խիստ ճերմակ՝ «այնպես, վալյում է Մարկոս ավետարանից» (Մարկ. Ժ2 12): Այս վայրի վրա ոչ մի վազեց անող չի կարող այդպես պաշտպանվել» (Թ2): Այդժամ հայտնվեցին Մովսեսն ու Եղիան եւ զրուցում էին Տիրոջ հետ: Մովսեսն ամենամեծ մարգարեն էր, օրենսդիրը, ում Աստված տասնաբնյալ օրենքը տվեց,

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մեր հյուրն է Բյուրավանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Ս. Ղազար քնն. Պետրոսյանը

Իսկ Եղիան՝ ամենաեղիանակավորը: Նա մահ չճաշակեց, այլ հրեղեն կառույց երկնք տարվեց (տե՛ս Դ Թագ. Բ 11): Տե՛րը Մովսեսին մեռելներից, իսկ Եղիային ողջներից էր կանչել, որպեսզի աշակերտները գիտակցեն, որ Ե՛ւ օրենքն էր այդտեղ, Ե՛ւ մարգարեները, իսկ կենտրոնում Ավետարանն էր, Բարի լուրը՝ Հիսուս Երիստոսը: Պայծառակերպությամբ Տե՛րն Իր աստվածային փառքը բացահայտեց առաքյալներին՝ ուսուցանելով, որ իրենց հետ ընդունված Աստված Ինքն է, եւ որ Աստծո տնօրինած յուրաքանչյուր ծրագիր բարի է եւ հավիտենական: Նա աստվածային փառքի հայտնությամբ ամրացրեց առաքյալների սրտերը:

Տե՛ր հայր, ինչո՛ւ Տե՛րն աշակերտներին պատվիրեց Իր պայծառակերպության մասին ոչ ոքի չառնել՝ մինչեւ Ի՛ր մեռելներից հարություն առնելը:

Տե՛րը նույն էր պատվիրում նաեւ զանազան բժշկումներ, հրաշքներ գործելիս: Բազմաթիվ խորհուրդներ կան թաքնված այստեղ: Աստվածային հայտնության բուն քարոզչությունը՝ պայծառակերպության պիտի հաջորդեր խաչելությունը: Երիստոսը եկել էր խաչելության համար, սակայն մարդիկ չհասկացան Նրա ողջ տնօրինությունը, նույնիսկ՝ առաքյալները, ուստի թե՛ ժողովուրդն իմանալ, չէր հասկանա խաչելությունը: Իսկ ինչո՛ւ Տե՛րը հատկապես այդ երեք առաքյալներին Իր հետ վերցրեց: Այս անշուշտությամբ հայրերն ասում են, որ նրանց միշտ Տիրոջ հետ էին՝ պատրաստ Նրա հրամանները կատարելու: Հովհաննեսը, ինչպես գիտենք, Հիսուսի սիրելի աշակերտն էր, Պետրոս առաքյալը՝ վեճի մի կերպար, որին նաեւ վիճակված էր առաջինը մարտիրոսվել Տիրոջ անվան համար:

Վարդ՞նք ենք ասել, որ պայծառակերպության ժամանակ Թաբոր լեռան վրա ներկա էր միասնական երրորդությունը. Հայրը՝ երկնային ձայնով, Որդին՝ պայծառակերպված, եւ Ս. Հոգին՝ ամպով Նրանց վրա հովանի եղած:

Անշուշտ: Աստված՝ որպես հավիտենական Եւրություն, Սբ երրորդություն է՝ Հայր, Որդի եւ Սբ Հոգի: Ուշադրություն դարձնենք Հոր խոսքերին. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, Որին հավանքի, Դրա՛ն լսե-

ցե՛ք» (Մատթ. ԺԵ 5): Հայր Աստված մարդկանց սրտերն ուղղում է դեպի սրբազան Որդին: Սա մեծագույն քարոզչությունն է, երբ անհատ, անճառ, գերագույն եւությունը՝ հավիտենական Աստված մարդկությանն ուղղորդում է դեպի մեծագույն գոհագործությունը՝ Աստծո Գառի պատրաստումը՝ մեղավոր մարդկության պարտության համար:

Տե՛ր հայր, պայծառակերպությունն ընդհանուր եզրեր ունի՞ Տիրոջ երկրորդ գալույթյան հետ:

Շատ ընդհանրություններ ունի: Ինչպես պայծառակերպության ժամանակ Երիստոսի դեմքից լույս ճառագեց, զգեստները խիստ ճերմակ դարձան, հայտնվեց աստվածային փառքը, այնպես էլ երկրորդ գալույթյան ժամանակ Երիստոսը երկնքից կհայտնվի նույն փառքով, հրեշտակների գնդերով, կգա որպես արդար Հատկապես՝ աշխարհը դառնելու: Եվ ովքեր տեսան Նրա խոնարհումը, չարչարանքները, խաչելությունը, պիտի տեսնեն նաեւ Նրա փառքը:

Ս. Գր. Տաթևացին ասում է, որ եթե աշակերտները Թաբոր լեռան վրա միայն մի պահ տեսան Աստծո փառքը, ապա հավիտենությունում տեսնելու ենք հավերժապետ... Խոսքը, անշուշտ, ապաշխարությամբ սրբված արարներին է վերաբերում:

Իհարկե: Երկրորդ գալույթյան ժամանակ Տիրոջ ահեղ փառքը պիտի տեսնեն բոլորը, ողջ տիեզերքը: Ավետարանն ասում է, որ այդժամ ոմանք պիտի ողբան, լաց ու կոծ անեն, որովհետեւ գրված են այլևս Երիստոսից, իսկ ոմանք պիտի բեկորվեն ու ցնձան: Հիշենք, թե ինչ ասաց Պետրոս առաքյալը. «Վարդապետ, լավ է, որ մենք այստեղ ենք. երեք տաղավար շինենք, մեկը՝ Բեգ, մեկը՝ Մովսեսի, եւ մեկը՝ Եղիայի համար» (Մով. Թ 33): Դա մի երանելի, ցնձալի վիճակ էր, ուստի առաքյալները չէին ցանկանում կտրվել այդ վայելքից: Ահեղ դատաստանից հետո անարտաբայելի երանական կյանքը պիտի վայելեն բոլոր արարները հավիտյան հավիտենից:

Պայծառակերպության տոնը ժողովրդական լեզվով անվանում են նաեւ Վարդավառ: Ինչո՞ւ:

Տոնը նաեւ Վարդավառ է կոչվում՝ Տիրոջ վարդի հետ համեմատելու պատճառով:



ռով: Հայրերն ասում են, որ ինչպես վաղը կոկոնի մեջ է ծածկված լինում նախքան բացվելը եւ բացվելով ամենքին երեւում է, այդպես էլ մեր Տե՛րը պայծառակերպվելով հայտնում է Իր Աստվածությունը: Իսկ միայնակ վրա չորս ցանցեր տարվողք ենք եւ դեռեւս Նոյ նահապետից: Հստ ինչ ասակություն է: Արարատ լեռից իջնելով՝ փրկվածները միմյանց վրա չորս են ցողալ: Ի՞նչ իշխանային աշխարհալուրծան չուհեղելի: Տուրք կենսական նշանակություն ունի մարդու համար, այն Աստծո պարգևն է: Ձրի միջոցով սրբվեց երկրագունդը Նոյի օրերին, նաեւ Երիստոսի ավանդած մկրտությամբ մարդիկ վերստին ծնվում են չորից եւ Հոգուց, սրբագործվում: Տոնի օրը միայնակ վրա չորս ցողալու պատշաճ դրսեւորումը գեղեցիկ է, սակայն չափեց եւ անցնել ասիմանը: Հարկ է ունի համարում նաեւ Նշել, որ Վարդավառը հեթանոսական տոն չէ, ինչպես կարծում են շատեր: Վարդավառը քրիստոնեական տոնն է:

Վստօ յուրաքանչյուր ինչպե՛ս կարող ենք Տիրոջ պայծառակերպության ժամանակից իջնել, տոնի խորհրդով ապրել:

Յուրաքանչյուր քրիստոնյա պարտավոր է տոնի օրը մասնակցել Ս. Պատարանգին, վայելել աստվածային օրհնությունները, հաղորդվել Երիստոսի Մարմնին եւ Արյանը, ընդունել Ս. հոգուհից ճառագող հոգեւոր լույսը, ջերմանալ, լուսավորվել՝ Աստծո շնորհով պատրաստվելով հավիտենական կյանքի համար:

Հյուրընկալեց
Ամեյա ԿԱՍՏՐՅԱՆ

ԻՈՒՆԵ ՏՈՒՐՈՒՄԻ

Սկիզբը՝ էջ 5

Սակայն ինչպես որ երկինքն է երկրից հեռու, այդպես էմ ճանապարհները հեռու են ձեր ճանապարհներից, եւ Իմ խորհուրդները՝ ձեր խորհուրդներից» (Շա. ԾԵ 8-9): Ար Գրիգորն ասել է, որ ցնել Աստծո դատաստանների ծածուկ պատճառները նշանակում է մեր մեղանշական հապարտությունը հակադրել Նրա հորորներին կամ ասիմանումներին: Ամեն անսովոր իրադարձության ժամանակ մեր պարտականությունը, մեր գործը սբ Ողորդի հետեւյալ խոսքը կրկնելը պիտի լինի. «Ո՛վ խորություն Աստծո մեծության, իմաստության եւ գիտության: Որքա՛ն անքննի են Նրա դատաստանները, եւ անգնի՛ն՝ Նրա ճանապարհները» (Հովն. ԺԿ 33):

Մեր երկրային կյանքում մենք շատ բանի հասու չենք դառնա մեր մտքով: Բավական է, որ իմանանք, համոզվենք եւ ունանք երկարության հավատանք, որ Աստված անարդար չէ, եւ Դատաստանի վերջին օրը դատվողների մեջ չի գտնվի մեկը, որ Տիրոջն ասի այլ բան, քան հետեւյալը. «Աղոթա՛ր ես Դու, Տե՛ր, եւ ուղիղ են Զո դատաստանները» (Մովս. ԺԾԸ 137): Ժամանակին Դավիթ թագավորը, տեսնելով աշխարհի ամբարշտու երջանիկներին, ովքեր իրենց օրհնակով իրենց հետեւից տանում էին Աստծո ժողովուրդի անդամներից որոշ-

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆԱԽԱՆԱՄՈՒԹՅՈՒՆ



ների, փափագում էր հասկանալ Նրանց մասին Աստծո դատաստանները: Երկար ու ապարդյուն խորհելով այս մասին՝ նա խոնարհաբար խոստովանեց. «Դժվար է սա հասկանալ ինձ, մինչեւ չմտնեմ Աստծո սրբարանը» (Մովս. ԶԲ 16-17): Մենք պետք է սպասենք մինչեւ գալիք կյանքը, որ առավել կատարելապես հասու դառնանք Աստծո բարձրագույն իմաստության անհասանելի դատաստաններին ու նպատակներին:

Այսպիսով՝ մենք Ե՛ւս դադարեց մեզ համար անհայտ բաների մասին մեր հեռաքարտաբան դատողության թեւերը տարածել: Բարձրագույն Մտքի անեզր օվկիանոսի ալիքները՝ շարունակ տարածվող ու հետ բաշվող, բարձրացող ու իջնող, գերազանցում են ամեն իմաստության արգասամուրթները: Եվ ինչպե՛ս կարող էինք մենք հասու դառնալ աստվածային խորհի դատաստանների վերջնական պատճառներին: Ո՛վ կարող է հասկանալ Աստծո խախախտմանությունը, թե ինչու այս մեկը հեթանոս է ծնվել, իսկ մյուսը՝ քրիստոնյա: Ինչու պիտեարանական քարոզչությունը շատ երկրներում բավական ուշ է կատարվել, մինչ ուրիշ երկրներում՝ ավելի վաղ: Ինչու մի պետություն լցված է հերետիկոսներով, իսկ մյուսն ազատ է չարա-

փառության բոլոր արատներից, եւ բարեպաշտությունը նրա մեջ խոր արմատ է գցել: Ինչու մեղքերի դիմաց Աստծո պատիժ ոմանց համար հետաձգվում է միևնույն ինչ-որ ժամանակ, իսկ ոմանց էլ՝ ժամանակին վրա հասնում: Ինչու երբեմն հանցագործության մեջ անմեղները դատվում, մեղադրվում ու գոհ են գտնում, իսկ որոշ մարդկանց մեղքեր էլ անդարդանում են նրանց զավակների եւ հետագա սերունդների վրա: Ինչու մեկը մեռնում է մանուկ հասակում, իսկ մի ուրիշը՝ հասնում խոր ծերության: Ինչու մեկը, ինչ-որ բանում սակավ մեղանշելով, առանց ապաշխարության է մեռնում, իսկ մի ուրիշը, երկար ժամանակ կեղտոտվելով ծանր անօրինությունների մեջ, վերջապես ուղղության է գալիս եւ քրիստոնյային վայել վախճան գտնում: Ինչու մեկը խեղդում է հարստության ու ճոխության մեջ, իսկ մի ուրիշը մի կտոր հաց, մի լուծա միջ շունի:

Անհասկալիս ու չափազանց հետաքրքրասեր միտք, ինչի՞նչ է պետք սա իմանալ: Աստված է թույլ տվել, Աստված է կամեցել, Աստված է արել այս ամենը: Մեզ համար կանաչաբաղուկ ճշմարտություն պիտի լինի Աստծո կամքը, եւ բարձրագույն իմաստությունը՝ որան հեռաքարտաբանության ու հանդարտության հետեւելը:

Թարգմանությունը՝ Ս. ՍՏԱՄԵՆՅԱՆ

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորվան եղա Չափարյանը Ֆրանսիայի նորասեղծ թեմի առաջնորդ



Հունիսի 22-ին Ֆրանսիայում՝ Փարիզի Սբ Հովհաննես Սկրտիչ եկեղեցում, տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ Ֆրանսիայի նորակազմ թեմի թեմակալ առաջնորդի ընտրությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատված եռանուն ցանկից (Լարեն եպս Շաքարյան, Նորվան եպս Չաքարյան, Կոմիտաս վրդ. Հովհաննես) թեմի պատգամավորական ժողովը զաղտիկ քվեարկությամբ առաջնորդ ընտրեց Նորվան եպս Չաքարյանին:

Դեռես անցյալ տարվա դեկտեմբերին Կեհափառ Հայրապետի կողակող հոգևորական Ֆրանսիայի հայոց թեմը:

Ֆրանսիայի առաջնորդանիստը շարունակելու է մնալ Փարիզի Սբ Հովհաննես Սկրտիչ եկեղեցին: Թեմի ներակայության տակ, համաձայն կանոնադրության, գործելու են երկու՝ Հայրավայրի Ֆրանսիայի եւ Ռուսկիայի փոխնորդությունները եւ 24 եկեղեցական համայնքներ:

Հունիսի 23-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական գիր է ուղղել Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդարան, որով հաստատել է գերաշնորհ Ս. Նորվան եպիսկոպոս Չաքարյանի ընտրությունը՝ որպես Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ:

«...Հայրապետական օրհնությամբ հաստատում ենք Գերաշնորհ Ս. Նորվան եպիսկոպոս Չաքարյանի ընտրությունը՝ որպես Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդ եւ այսու տնօրինում, որ ինքնապես Սուրբ Պատարագի արարողությանց Ֆրանսիայի Հայոց թեմի եկեղեցիներում հիշատակվի նորընտիր Առաջնորդի անունը»,- ասվում է հայրապետական գրի մեջ: Նորին Սրբությունը նաեւ իր բարձր գնահատանքն է հայտնել Թեմական խորհրդի անդամներին եւ Թեմական պատգամավորական ժողովին՝ առաջնորդական տեղապահ գերաշնորհ Ս. Գյուտ արքեպիսկոպոս Նազգալյանի գլխավորությամբ թեմակալ առաջնորդի ընտրությունների կազմակերպական աշխատանքների իրականացման համար:

Լրատվական կյուրերը՝

ՄԱՅՐ ԱՅՈՐ ՍԲ ԵՋՄԱԾՆԻ ՏԵՐԵԿՆԵՐԿԱՆՆԵՐ ԿԱՍՏԱՆԿԱՆ

ՄՅՈՒՆՅԱՅԵՐԻՆՈՒՄ

Օժվեց Սուրբ Տրդատ մատուռը


Հունիսի 17-ին, հանդիսապետությամբ Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպս Սկրտյանի, մասնակցությամբ Սյունյաց թեմի փոխառաջնորդ Աբգար վրդ. Հովակիմյանի եւ Գորիսի հոգեւոր հովիվ Շիրակ քին. Խանդանի, տեղի ունեցավ Գորիս քաղաքի մուտակայքում կառուցված Սուրբ Տրդատ մատուռի օծման արարողությունը, որի բարերարն էր Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը: Արարողությանը ներկա էին նաեւ Գորիսի քաղաքապետ Ն. Ոսկանյանը, Սյունյաց մարզի համայնքապետեր, օտարերկրյա հյուրեր: Հավարտ արարողության՝ Աբգար վրդ. Հովակիմյանի իր օրհնությունն ու բարեմաղթանքներն ուղղեց մազպետին եւ շինարարներին՝ մասնավորաբար նշելով, որ Սյունյաց աշխարհը միշտ առանձնացել է եկեղեցականության աստվածահաճո գործունեությամբ, եւ որ այսօր էլ Սյունյաց աշխարհում կան նվիրյալ գավառներ՝ ի դեմս Սուրեն Խաչատրյանի, ովքեր հավատարմի են նախնայաց ժառանգությանը եւ ազգային հոգեւոր արժեքներին: Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպս Սկրտյանի իր մասնավոր եւ հատուկ օրհնությունն ուղղեց Սուրբ Տրդատ մատուռի բարերարին եւ ճարտարապետ-շինարար Սեւադա Չաքարյանին:

Դիվան Սյունիքի
փոխառաջնորդության



ԳԵՂԱՐԵՈՒՆՅԱՅԵՐԻՆՈՒՄ

Օժվեց Սեւանի ձամաքաքերը թաղամասի Սբ Գեորգ եկեղեցին



Սբ Գեորգ եկեղեցին կառուցվել է 19-րդ դարի վերջին՝ գյուղի բնակիչների միջոցներով, եւ ներսորեն կապված է եղել Սեւան կղզու վանական միաբանության հետ:

Խորհրդային շրջանում այն ծառայել է որպես գյուղի պահեստ: Ժամանակի ընթացքում սկսել է քանդվել եւ մինչեւ վերջերս գտնվում էր կիսավեր վիճակում:

Եկեղեցու ամբողջական նորոգությունն ստանձնեց արմատներով ցամաքաքերոցի Վալտեր Մարությունը: Հունիսի 23-ին Գեղարքունիքի թեմի առաջնորդ Սարկուս եպս Հովհաննիսյանի ձեռնաքն օծվեցին նորոգված եկեղեցու Սուրբ Սեւանի ու մկրտության ավազանը:

Սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ կառավարության անդամներ, Սեւանի քաղաքապետ Գ. Մալիսյանը, մշակույթի եւ քաղաքական գործիչներ ու բազում հավատացյալներ:

ԳՈՒԳԱՐԱՅԵՐԻՆՈՒՄ

ՍՄՆ Արեւմտյան թեմի ԵՄԱԿ կազմակերպության մի խումբ երիտասարդներ հյուրընկալվեցին Գուգարաց թեմում



նից՝ ինչ էլ որ լինի, նույնպես եւ Հայաստանը պիտի սիրես: Միայն այն դեպքում կարող ես արժանավորապես կրել հայ անունը»:

Հանդիպման ավարտին երիտասարդներն այցելեցին թեմակալական «Ծիծեռնակ» ճամբար, ապա Հաղպատի եւ Սանահինի վանքեր: Առաջնորդը ասաց՝

Նրանք հանդիպեցին թեմի եկեղեցապետ երիտասարդաց միության անդամներին հետ, ջերմ ու մտերմ կապեր հաստատեցին երիտասարդներին: Սփյուռքահայ երիտասարդների հետաքրքիր էր նաեւ հայաստանաբնակ երիտասարդների խնդիրները, միության գործունեությունը եւ առաջիկա ծրագրերը: Նրանք համատեղ ծրագրերի իրականացման պատրաստակամություն հայտնեցին՝ հանուն մեր Մայր եկեղեցու եւ հայրենիքի պայծառացման:

Ուխտավորները ջերմ զգացումներով ու կրկին Գուգարաց թեմ այցելելու փափագով Վանաձորի ճանապարհվեցին Հաղպատին:

Աստղիկ ՍՄՐԱՆ

Հրանտ Դինքի հիշատակին նվիրված ոգեկոչման հանդիսավոր արարողություն

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում 2007 թ. հունիսի 19-ին տեղի ունեցավ «Ալուս» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի հիշատակի ոգեկոչման արարողություն: Բուհի ղեկավար Գ. Խաչատրյանի առաջնորդությամբ եւ ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ՝ բանասիրական ֆակուլտետի նորաբաց ժուռնալիստիկայի լսարանն անվանվեց Հրանտ Դինքի անվամբ:

Գուգարաց թեմի առաջնորդ Սեւակ եպս Գուգարյանի իրավերով հանդիսավոր արարողությունն իրենց ներկայությամբ պատվել էին Հրանտ Դինքի այրին՝ տիկին Ռաբել, եւ Հրանտի եղբայրը՝ Երվանդը: Միջոցառմանը ներկա էին ինստի-

տուտի դասախոսական կազմը, ուսանողներ, ինչպես նաեւ լրագրողներ, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ, հասարակական գործիչներ, մտավորականներ:

Բացման խոսքով հանդես եկավ տիար Գ. Խաչատրյանը: Նա իր խոսքում կարեւորեց Հրանտ Դինքի ազգային-հասարակական գործունեությունը:

Ապա Սեւակ սրբազանի արժեքից հետո տեղի ունեցավ Հրանտ Դինքի հիշատակին պատրաստված հուշաքարի բացման արարողությունը:

Թեմակալ առաջնորդը, ողջունելով ներկայից, ներկայացրեց մայրաքաղաքի իր հայրենակցի կենսագրությունը եւ բազմաբերուն ու ազգային հասարակական գոր-

ծունեությունը, ապա մխիթարական խոսքեր ուղղեց տիկին Ռաբելին, Հրանտի եղբորը եւ ներկայիցին:

Միջոցառմանը ելույթ ունեցան նաեւ գրականության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Սեյա Սանթրյանը, Հայաստանում «Ալուս» թերթի թղթակից տիկին Լուսինա Գրիգորյանը եւ այլք:

Տիկին Ռաբել Դինքը հուզմունքով եւ երախտագիտությամբ իր շնորհակալությունը հայտնեց Գուգարաց թեմի առաջնորդին եւ բուհի ղեկավարությանը՝ նմանորինակ գնահատանքի եւ ուշադրության համար:

Դիվան ԳՈՒԳԱՐԱՅԵՐԻՆՈՒՄ

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅԱՍԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Երիտմայր Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Ստադիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Ե. Վաղարշապատ, ԷԿ

Քաղաքի թ. (0+231) 54510

Ստոր. տպագր. 2.7.2007 թ.

Տպագրանակ՝ 2500 Գինը՝ 50 դրամ

